## *Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք*
## ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

**Հոդված 408. Պարտավորության խախտման հասկացությունը**

Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

**Հոդված 408[1]. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը**

1. Պայմանագրային պարտավորության խախտման համար անձը ենթակա չէ պատասխանատվության, եթե պարտավորությունը չկատարելը կամ անպատշաճ կատարելն անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժոր) ազդեցության հետևանք է, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2. Անհաղթահարելի ուժ է համարվում այն իրադարձությունը,

– որի տեղի ունենալը որևէ կերպ կախված չէ պարտապանի կամքից (արտաքին ազդեցություն) և դուրս է նրա վերահսկողությունից (անկառավարելի),
– որի ազդեցության հետևանքներից հնարավոր չէ խուսափել՝ կիրառելով անհրաժեշտ միջոցներ (անկանխելի),
– որը սահմանափակում է պարտապանի կողմից պարտավորության պատշաճ կատարումը (ուղղակի ազդեցություն),
– որը հնարավոր չէր կանխատեսել պայմանագրի կնքման պահին (անկանխատեսելի):

3. Սույն օրենսգրքի իմաստով՝ անհաղթահարելի ուժ են համարվում ռազմական գործողությունները (զինված ընդհարումները), պատերազմը (այդ թվում՝ քաղաքացիական), արտակարգ կամ ռազմական դրությունը կամ արտակարգ իրավիճակը, տարերային աղետը, համաճարակը կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հատկանիշներով բնորոշվող այլ իրադրությունը կամ իրադարձությունը:

4. Պայմանագրով կարող է նախատեսվել այլ տեսակի անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով պարտավորությունների կատարման հետաձգում կամ կասեցում, դրանց կատարումից կամ պատասխանատվությունից ազատում:

~~1.~~5. Եթե կողմը վիճարկում է անհաղթահարելի ուժի ազդեցության փաստը, ապա վեճը լուծվում է դատական կարգով: Ընդ որում, պարտավորությունն անհաղթահարելի ուժի ազդեցությամբ չկատարելու կամ անպատշաճ կատարելու փաստն ապացուցում է պարտապանը:

**Հոդված 417. Պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության հիմքերը**

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի~~, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների~~ազդեցության հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. Պարտավորությունը դիտավորյալ խախտելու համար պատասխանատվությունը վերացնելու կամ սահմանափակելու մասին նախապես կնքված համաձայնությունն առոչինչ է:

**Հոդված 864. Փոխադրողի՝ տրանսպորտային միջոցներ չտրամադրելու համար և առաքողի՝ տրամադրված տրանսպորտային միջոցները չօգտագործելու համար պատասխանատվությունը**

1. Փոխադրողը, ընդունված հայտին (պատվերին) կամ պայմանագրին համապատասխան, բեռի փոխադրման համար տրանսպորտային միջոցները չտրամադրելու, իսկ առաքողը՝ բեռը չներկայացնելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցներն այլ պատճառներով չօգտագործելու համար կրում

են օրենքով, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ սահմանված պատասխանատվություն:

2. Բեռ փոխադրողը և առաքողն ազատվում են տրանսպորտային միջոցները չտրամադրելու կամ տրամադրված տրանսպորտային միջոցները չօգտագործելու համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել՝

1) անհաղթահարելի ուժի~~, ինչպես նաև տարերային բնույթի այլ երևույթների (հրդեհների, ջրհեղեղների և այլնի) կամ ռազմական գործողությունների~~ազդեցության հետևանքով.

2) որոշակի ուղղություններով բեռների փոխադրումներն օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես դադարեցնելու կամ սահմանափակելու հետևանքով.

3) օրենքով սահմանված այլ դեպքերում: